

ԿՈՆՎԵՆՑԻԱ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ
ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ
ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՆ ՈՒ ՇՐՋԱՆՑԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունը եւ Ճապոնիան,

ցանկանալով էլ ավելի զարգացնել իրենց տնտեսական
հարաբերությունները եւ ընդլայնել հարկային ոլորտում իրենց
համագործակցությունը,

մտադրություն ունենալով կնքել եկամուտների կրկնակի հարկումը
բացառելու մասին կոնվենցիա՝ չստեղծելով հարկերից խուսափելու կամ դրանք
շրջանցելու միջոցով չհարկման կամ նվազեցված հարկման
հնարավորություններ (այդ թվում՝ երրորդ պետությունների ռեզիդենտներին
անուղղակի արտոնություն տրամադրելու նպատակով սույն Կոնվենցիայով
նախատեսված՝ հարկերից ազատվելու համար պայմանագրի
առավելություններից օգտվելուն ուղղված կարգավորումների միջոցով),

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

2. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ այն սուբյեկտի կողմից կամ այն կարգավորման միջոցով ստացված եկամուտը, որը երկու Պայմանավորվող պետությունների մեկի հարկային օրենքով դիտարկվում է որպես ֆինանսապես ամբողջովին կամ մասամբ թափանցիկ, համարվում է Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտը, սակայն միայն այնքանով, որքանով եկամուտն այդ Պայմանավորվող պետության կողմից հարկման նպատակներով ընկալվում է որպես այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամուտ:

3. Սույն Կոնվենցիան Պայմանավորվող պետության կողմից իր ռեզիդենտների հարկման վրա չի ազդում՝ բացառությամբ 7-րդ հոդվածի 3-րդ կետին, 9-րդ հոդվածի 2-րդ կետին եւ 18-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ եւ 27-րդ հոդվածներին համապատասխան տրամադրված արտոնությունների:

ՀՈԴՎԱԾ 2

ՀԱՐԿԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

1. Սույն Կոնվենցիան տարածվում է Պայմանավորվող պետության կամ դրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից սահմանված եկամուտներից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից գանձվող հարկեր են համարվում ընդհանուր եկամտի կամ եկամտի տարրերի նկատմամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը, ներառյալ՝ գույքի օտարումից ստացված եկամուտների նկատմամբ սահմանված հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող վարձատրությունների կամ աշխատավարձերի ընդհանուր չափի նկատմամբ սահմանված հարկերը, ինչպես նաեւ գույքի արժեքի հավելածի նկատմամբ սահմանված հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետեւյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանում՝

i) շահութահարկ, եւ

ii) եկամտային հարկ,

(այսուհետ՝ հայկական հարկ):

բ) Ճապոնիայում՝

- i) եկամտային հարկ,
- ii) կորպորատիվ հարկ,
- iii) հատուկ եկամտային հարկ վերակառուցման համար,
- iv) տեղական կորպորատիվ հարկ, եւ
- v) տեղի բնակիչներից գանձվող հարկեր (այսուհետ՝ ճապոնական հարկ):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաեւ նմանատիպ կամ էապես նման ցանկացած հարկի նկատմամբ, որը կսահմանվի Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն գործող հարկերի, կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե այլ բան չի բխում համատեքստից՝

ա) «Հայաստան» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը եւ աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում

նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածքը, այդ թվում՝ հողը, ջրերը, ընդերքը եւ օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքներն ու իրավագործությունը՝ իր ազգային օրենսդրության եւ միջազգային իրավունքի համաձայն.

բ) «Ճապոնիա» եզրույթը աշխարհագրական իմաստով օգտագործվելու դեպքում նշանակում է Ճապոնիայի ամբողջ տարածքը, այդ թվում՝ տարածքային ծովը, որտեղ գործում են Ճապոնիայի հարկային օրենքները, ինչպես նաեւ տարածքային ծովի սահմաններից դուրս գտնվող ցանկացած ծովային տարածք, այդ թվում՝ ծովի հատակը եւ դրա ընդերքը, որոնց նկատմամբ Ճապոնիան միջազգային իրավունքի համաձայն ունի ինքնիշխան իրավունքներ, եւ որտեղ գործում են Ճապոնիայի հարկային օրենքները.

գ) «Պայմանավորվող պետություն» եւ «մյուս Պայմանավորվող պետություն» եզրույթները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Ճապոնիա.

դ) «անձ» եզրույթը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն եւ անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ընկերություն» եզրույթը նշանակում է ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած կազմավորում, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես կորպորատիվ միավորում.

զ) «ձեռնարկություն» եզրույթը կիրառվում է ցանկացած տեսակի

ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եւ «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» եզրույթները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

ը) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է ցանկացած փոխադրում նավով կամ օդանավով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջեւ, եւ այդ նավը կամ օդանավը շահագործող ձեռնարկությունն այդ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չէ.

թ) «իրավասու մարմին» եզրույթը նշանակում է՝

i) Հայաստանում՝ Ֆինանսների նախարարությունը եւ Պետական եկամուտների կոմիտեն կամ դրանց լիազորված ներկայացուցիչները.

ii) Ճապոնիայում՝ Ֆինանսների նախարարը կամ նրա լիազորված ներկայացուցիչը.

ժ) «քաղաքացի» եզրույթը Պայմանավորվող պետության առնչությամբ նշանակում է՝

i) այդ Պայմանավորվող պետության ազգություն կամ քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ, եւ

ii) այդ Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա որպես այդպիսին կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ միավորում.

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը ներառում է մասնագիտական ծառայությունների եւ անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը.

ժբ) Պայմանավորվող պետության «հաստատված կենսաթոշակային հիմնադրամ» եզրույթը նշանակում է Պայմանավորվող պետության օրենքներով սահմանված սուբյեկտ կամ կարգավորում, որը այդ Պայմանավորվող պետության հարկային օրենքներով ընկալվում է որպես առանձին անձ, եւ

i) որը հիմնադրվել է եւ գործում է բացառապես կամ գրեթե բացառապես կառավարելու համար կամ անհատներին կենսաթոշակային եւ լրացուցիչ կամ կողմնակի արտոնություններ տրամադրելու համար, եւ որը, որպես այդպիսին, կարգավորվում է այդ Պայմանավորվող պետության կամ դրա վարչատարածքային ստորաբաժանումներից կամ տեղական մարմիններից մեկի կողմից, կամ

ii) որը հիմնադրվել էւ գործում է բացառապես կամ գրեթե բացառապես այդ Պայմանավորվող պետության այլ հաստատված կենսաթոշակային հիմնադրամների օգտին միջոցներ ներդնելու նպատակով:

Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան ստեղծված

սուբյեկտը կամ սահմանված կարգավորումը «i» կամ «ii» պարբերությունների համաձայն հաստատված կենսաթոշակային հիմնադրամ համարվելու պայմաններում այդ Պայմանավորվող պետության հարկային օրենքներով որպես առանձին անձ դիտարկվելու դեպքում սույն Կոնվենցիայի նպատակներով համարվում է առանձին անձ՝ որպես այդպիսին դիտարկվելով այդ Պայմանավորվող պետության հարկային օրենքներին համապատասխան, եւ սուբյեկտի կամ կարգավորման բոլոր ակտիվները եւ եկամուտը դիտարկվում են որպես այդ առանձին անձի եւ ոչ այլ անձի սեփականությունը հանդիսացող ակտիվներ եւ ստացված եկամուտ:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստն այլ բան չի պահանջում կամ իրավասու մարմինների համաձայնությամբ դրան այլ նշանակություն չի հաղորդվել 24-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ունի այն նշանակությունը, որն այն կրում է տվյալ պահին այդ Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան՝ այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ Կոնվենցիան կիրառվում է. ընդ որում, այդ Պայմանավորվող պետության կիրառելի հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պայմանավորվող պետության այլ օրենքներով այդ եզրույթին տրվող նշանակության նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 4

ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» եզրույթը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պայմանավորվող պետության օրենսդրությամբ այդտեղ ենթակա է հարկման իր բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, գլխամասային կամ գլխավոր գրասենյակի, ղեկավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա, եւ ներառում է նաեւ այդ Պայմանավորվող պետությունը եւ դրա ցանկացած վարչատարածքային ստորաբաժանում, իշխանության տեղական մարմին, ինչպես նաեւ Պայմանավորվող պետության հաստատված կենսաթոշակային հիմնադրամը: Այս եզրույթը, այնուամենայնիվ, չի ներառում որեւէ անձի, որն այդ Պայմանավորվող պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում առկա աղբյուրներից ստացված եկամուտների առնչությամբ:

2. Այն դեպքում, երբ ֆիզիկական անձը, 1-ին կետի դրույթներին համապատասխան, երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետեւյալ կերպ.

ա) նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան. եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության

ռեզիդենտը, որի հետ նրա անձնական եւ տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն)։

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է։

գ) եթե նա սովորաբար երկու Պայմանավորվող պետություններում էլ բնակվում է կամ չի բնակվում դրանցից եւ ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է։

դ) եթե նա երկու Պայմանավորվող պետությունների քաղաքացի է կամ դրանցից որեւէ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ։

3. Այն դեպքում, երբ ֆիզիկական անձ չհանդիսացող անձը, 1-ին կետի դրույթներին համապատասխան, երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պետք է ջանքեր գործադրեն փոխադարձ համաձայնությամբ որոշելու այն Պայմանավորվող պետությունը, որի ռեզիդենտ պետք է համարվի տվյալ անձը Կոնվենցիայի նպատակներով՝ հաշվի առնելով դրա գլխամասային կամ գլխավոր գրասենյակը, արդյունավետ կառավարման, հիմնադրման կամ այլ կերպ ստեղծված լինելու վայրը եւ այլ էական գործոններ։ Այդպիսի

համաձայնության բացակայության դեպքում այդ անձը չի օգտվում
Կոնվենցիայով սահմանված՝ հարկերի թեթեւացման կամ հարկերից ազատման
իրավունքից:

ՀՈԴՎԱԾ 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն»
եզրույթը նշանակում է ձեռնարկատիրական գործունեության մշտական վայր,
որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության
ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» եզրույթը մասնավորապես ներառում է
հետեւյալը.

- ա) կառավարման վայր.
- բ) մասնաճյուղ.
- գ) գրասենյակ.
- դ) գործարան.
- ե) արհեստանոց. եւ
- զ) հաճախող, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական
պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. «Մշտական հաստատություն» եզրույթը նաեւ ներառում է հետեւյալը.

ա) շինարարական հրապարակ, կառուցման, հավաքման կամ տեղակայման նախագիծ կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեություն, սակայն միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, նախագծի կամ գործունեության տեսողությունն ինն ամսից ավելի է,

բ) ձեռնարկության կողմից այդ նպատակով ներգրավված աշխատակիցների կամ այլ անձնակազմի միջոցով ծառայությունների, այդ թվում՝ խորհրդատվական ծառայությունների մատուցում, սակայն միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը Պայմանավորվող պետության տարածքում (միեւնույն կամ դրա հետ կապված ծրագրի համար) տվյալ հարկային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում շարունակվում է ընդհանուր առմամբ 183 օրը գերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով:

«Ա» ենթակետով նախատեսված գործունեության տեսողությունը որոշվում է այն ժամանակահատվածները գումարելու միջոցով, որոնցից յուրաքանչյուրը գերազանցում է 30 օրը, որի ընթացքում գործունեությունն իրականացվում է Պայմանավորվող պետության տարածքում միեւնույն վայրում միմյանց հետ սերտորեն կապված ձեռնարկությունների կողմից՝ պայմանով, որ այդ Պայմանավորվող պետությունում այդպիսի սերտորեն կապված ձեռնարկության գործունեությունը կապված է այդ Պայմանավորվող պետությունում դրա հետ սերտորեն կապված ձեռնարկությունների

գործունեության հետ: Ժամանակահատվածը, որի ընթացքում երկու կամ ավելի սերտորեն կապված ձեռնարկություններ միաժամանակյա գործունեություն են իրականացնում, հաշվարկվում է միայն մեկ անգամ՝ գործունեության տեղությունը որոշելու համար:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ համարվում է, որ «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման եւ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) ձեռնարկության համար ձեռնարկատիրական գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ձեռնարկության համար «ա»-«դ» ենթակետերում չթվարկված ցանկացած գործունեություն իրականացնելու նպատակով՝ պայմանով, որ

գործունեությունը կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ,

զ) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունն այդ համակցության արդյունքում շարունակում է կրել նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. 4-րդ կետը կիրառելի չէ ձեռնարկատիրական գործունեության այն մշտական վայրի նկատմամբ, որն օգտագործվում կամ պահպանվում է ձեռնարկության կողմից այն դեպքում, երբ տվյալ ձեռնարկությունը կամ դրա հետ սերտորեն կապված ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում միեւնույն վայրում կամ միեւնույն Պայմանավորվող պետության մեկ այլ վայրում, եւ

ա) այդ վայրը կամ այլ վայր համարվում է այդ ձեռնարկության կամ դրա հետ սերտորեն կապված այլ ձեռնարկության մշտական հաստատություն՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան, կամ

բ) միեւնույն վայրում երկու ձեռնարկությունների կամ այդ նույն ձեռնարկության կամ սերտորեն կապված այլ ձեռնարկության կողմից երկու վայրերում իրականացված գործունեության տեսակների համակցության արդյունքում առաջացած ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթ չի կրում,

պայմանով, որ երկու ձեռնարկությունների կողմից միեւնույն վայրում կամ

այդ նույն ձեռնարկության կամ սերտորեն կապված այլ ձեռնարկության կողմից երկու վայրերում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները համարվում են փոխլրացնող գործառույթներ, որոնք համակցված ձեռնարկատիրական գործունեության մաս են կազմում:

6. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին, սակայն հաշվի առնելով 7-րդ կետի դրույթները, որոնց համաձայն անձը Պայմանավորվող պետությունում գործում է ձեռնարկության անունից եւ այդպիսով սովորույթի ուժով պայմանագրեր է կնքում կամ սովորույթի ուժով գլխավոր դեր է ստանձնում այն պայմանագրերի կնքման գործընթացում, որոնք սովորաբար կնքվում են առանց ձեռնարկության կողմից կատարվող էական փոփոխությունների, եւ այդ պայմանագրերը կնքվում են՝

ա) այդ ձեռնարկության անունից, կամ

բ) այդ ձեռնարկությանը պատկանող կամ օգտագործման իրավունքով այդ ձեռնարկությանը պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելու կամ օգտագործման իրավունք շնորհելու նպատակով, կամ

գ) այդ ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցման նպատակով,

այդ ձեռնարկությունը համարվում է տվյալ Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող՝ այդ անձի կողմից տվյալ

ձեռնարկության համար ձեռնարկվող ցանկացած գործունեության մասով, եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը, եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով (բացի ձեռնարկատիրական գործունեության այն մշտական վայրից, որի նկատմամբ կիրառելի է 5-րդ կետը), այդ գործունեության մշտական վայրը 4-րդ կետի դրույթների համաձայն չի վերածում մշտական հաստատության:

7. 6-րդ կետը կիրառելի չէ այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից հանդես եկող անձը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում՝ որպես անկախ գործակալ, եւ տվյալ ձեռնարկատիրական բնականոն գործունեության շրջանակներում գործում է ի շահ ձեռնարկության: Այնուամենայնիվ, եթե անձը բացառապես կամ գրեթե բացառապես գործում է մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների անունից, որոնց հետ սերտորեն կապված է, այդ անձը սույն կետի իմաստով չի կարող որեւէ նման ձեռնարկության նկատմամբ անկախ գործակալ համարվել:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պայմանավորվող պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ ձեով), ինքնին այդ ընկերություններից որեւէ մեկը չի դարձնում մյուսի մշտական

հաստատությունը:

9. Սույն հոդվածի նպատակներով անձը կամ ձեռնարկությունը սերտորեն կապված է ձեռնարկության հետ, եթե, ելնելով բոլոր էական փաստերից եւ հանգամանքներից, մեկը վերահսկողություն է իրականացնում մյուսի նկատմամբ, կամ երկուսն էլ գտնվում են միեւնույն անձանց կամ ձեռնարկությունների վերահսկողության ներքո: Ամեն դեպքում անձը կամ ձեռնարկությունը այլ ձեռնարկության հետ սերտորեն կապված է համարվում այն դեպքում, երբ ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է մյուս ձեռնարկության շահութաբաժնի 50 տոկոսից ավելին (կամ ընկերության դեպքում՝ ընկերության բաժնետոմսերով տրամադրվող ընդհանուր ձայների եւ դրանց ընդհանուր արժեքի կամ ընկերության բաժնետիրական կապիտալի 50 տոկոսից ավելին), կամ եթե այլ անձ կամ ձեռնարկություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է անձի կամ ձեռնարկության կամ երկու ձեռնարկությունների շահութաբաժնի 50 տոկոսից ավելին (կամ ընկերության դեպքում՝ ընկերության բաժնետոմսերով տրամադրվող ընդհանուր ձայների եւ դրանց ընդհանուր արժեքի կամ ընկերության բաժնետիրական կապիտալի 50 տոկոսից ավելին):

ՀՈՂՎԱԾ 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ՝ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացած եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Անշարժ գույք» եզրույթն ունի այն նշանակությունը, որը դրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Եզրույթն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում եւ անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) եւ օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի եւ այլ բնական պաշարների մշակման կամ մշակման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները. նավերը եւ օդանավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձեւով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 7

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇԱՀՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձեռով, ապա 2-րդ կետի դրույթներին համապատասխան մշտական հաստատությանը վերագրելի շահույթը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Սույն հոդվածի եւ 22-րդ հոդվածի նպատակներով յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում 1-ին կետում նշված մշտական հաստատությանը վերագրելի շահույթն այն շահույթն է, որը վերջինս կարող էր ակնկալել մասնավորապես ձեռնարկության այլ ստորաբաժանումների հետ գործարքներից, եթե լինե՛ր միեւնույն կամ համանման պայմաններում միեւնույն կամ համանման գործունեություն իրականացնող առանձին եւ ինքնուրույն ձեռնարկություն՝ հաշվի առնելով ձեռնարկության մշտական հաստատության եւ այլ ստորաբաժանումների միջոցով կատարվող գործառույթները,

օգտագործվող ակտիվները եւ ստանձնած ռիսկերը:

3. Եթե 2-րդ կետին համապատասխան Պայմանավորվող պետությունը ճշգրտում է Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ձեռնարկության մշտական հաստատությանը վերագրելի շահույթը եւ համապատասխանաբար հարկում է մյուս Պայմանավորվող պետությունում հարկման համար արդեն գանձված ձեռնարկության շահույթը, այդ մյուս Պայմանավորվող պետությունը կատարում է այդ շահույթից իր գանձած հարկի գումարի համապատասխան ճշգրտում այնքանով, որքանով դա անհրաժեշտ է շահույթի կրկնակի հարկումից խուսափելու համար: Այդ ճշգրտումը որոշելիս Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

4. Եթե շահույթը ներառում է սույն Կոնվենցայի այլ հոդվածներում առանձին քննարկվող եկամտի տեսակներ, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

ՀՈՂՎԱԾ 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Անկախ 2-րդ հոդվածի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությունը միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործման մասով Հայաստանի ձեռնարկության դեպքում ազատվում է Ճապոնիայի ձեռնարկության եկամուտներից գանձվող հարկից, իսկ Ճապոնիայի ձեռնարկության դեպքում՝ Հայաստանում սույն Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո սահմանված՝ Ճապոնիայի ձեռնարկության եկամուտներից գանձվող հարկին համանման ցանկացած հարկից:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաեւ միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ տրանսպորտային միջոցների շահագործմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Այն դեպքում, երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միեւնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, եւ յուրաքանչյուր դեպքում, երբ երկու ձեռնարկությունների միջեւ նրանց առեւտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել անկախ ձեռնարկությունների միջեւ, ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձեռով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետությունն այդ Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթում ներառում եւ համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում, եւ այդ ձեռով ներառված շահույթի բոլոր

տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ նշված առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին կլինեին անկախ ձեռնարկությունների միջև, այդ դեպքում այդ մյուս Պայմանավորվող պետությունը կատարում է այդ շահույթից իր գանձած հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդ ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, եւ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

ՀՈԴՎԱԾ 10

ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարվող շահաբաժինները նույնպես կարող են հարկվել այդ Պայմանավորվող պետությունում՝ այդ Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող

պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարված շահաբաժինները հարկվում են միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, եւ ընկերություն է, որը 365 օր ժամանակահատվածում, որը ներառում է այն ամսաթիվը, որի ընթացքում որոշվում է շահաբաժինների ստացումը, (այդ ժամանակահատվածը հաշվարկելու համար հաշվի չեն առնվելու կորպորատիվ վերակազմակերպման արդյունքում, ինչպիսիք են միաձուլումը կամ բաժանման ձեռով վերակազմակերպումը, այն ընկերության ուղղակիորեն առաջացած սեփականության փոփոխությունները, որը շահաբաժինների փաստացի սեփականատերն է, կամ որը վճարում է շահաբաժինները) ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինել է՝

ա) Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող՝ շահաբաժիններ վճարող ընկերության դեպքում՝ այդ ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը,

բ) Ճապոնիայի ռեզիդենտ հանդիսացող՝ շահաբաժիններ վճարող ընկերության դեպքում՝ այդ ընկերության ձայնի իրավունքի առնվազն 25 տոկոսը:

4. Անկախ 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթներից, եթե Պայմանավորվող

պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից վճարվող շահաբաժինները նվազեցվում են այդ Պայմանավորվող պետությունում ընկերության հարկման ենթակա եկամուտը հաշվարկելիս, այդ շահաբաժինները կարող են հարկվել այդ Պայմանավորվող պետությունում՝ այդ Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

5. 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները չեն ազդում ընկերության շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

6. «Շահաբաժիններ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհամարվող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաեւ եկամուտ այլ իրավունքներից, որի վրա տարածվում է միևնույն հարկման ռեժիմը, որը տարածվում է բաժնետոմսերից ստացվող եկամտի վրա այն Պայմանավորվող պետության օրենքների համաձայն, որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

7. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական

հաստատության միջոցով, եւ այն մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

8. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պայմանավորվող պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կամ երբ այն մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, եւ չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման՝ ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պայմանավորվող պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

ՀՈԴՎԱԾ 11

ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները կարող են հարկվել նաև այդ Պայմանավորվող պետությունում այդ Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան. բայց, եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսները հարկման ենթակա են միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե՝

ա) տոկոսի փաստացի սեփականատերը այդ մյուս Պայմանավորվող պետությունն է, վերջինիս վարչատարածքային ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը, այդ մյուս Պայմանավորվող պետության կենտրոնական բանկը կամ այդ մյուս Պայմանավորվող պետության կամ դրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից ամբողջովին տնօրինվող ցանկացած հաստատություն, կամ

բ) այդ մյուս Պայմանավորվող պետության, դրա վարչատարածքային

ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի, Պայմանավորվող պետության կենտրոնական բանկի կամ այդ մյուս Պայմանավորվող պետության կամ դրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից ամբողջովին տնօրինվող ցանկացած հաստատության կողմից երաշխավորվող, ապահովագրվող կամ անուղղակիորեն ֆինանսավորվող պարտապահանջների տոկոսի փաստացի սեփականատերն այդ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտն է:

4. «Տոկոսներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից՝ անկախ հիփոթեքային ապահովումից եւ պարտապանի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, եւ մասնավորապես՝ եկամուտ պետական արժեթղթերից եւ եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ՝ այդ արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները, ինչպես նաեւ այլ եկամուտներ, որոնք հարկվում են միեւնույն հարկային ռեժիմով, ինչ փոխառու միջոցներից ստացված եկամուտը՝ այն Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան, որում առաջացել է եկամուտը: 10-րդ հոդվածում նշված տոկոսը եւ ժամկետանց վճարման համար գանձվող տուգանքը սույն հոդվածի նպատակներով տոկոսներ չեն համարվում:

5. 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է

իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, եւ այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդ մշտական հաստատությունը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Այն դեպքում, երբ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին

համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոնվենցիայի մյուս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 12

ՌՈՅԱԼԹԻՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այնուամենայնիվ, Պայմանավորվող պետությունում առաջացող ռոյալթիները կարող են նաեւ հարկվել այդ Պայմանավորվող պետությունում այդ Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան. իսկ եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձեռով գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը:

3. «Ռոյալթիներ» եզրույթը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարում, որը որպես փոխհատուցում ստացվել է գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի, այդ թվում՝ կինոնկարների, կամ ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի կամ գաղտնի բանաձեւի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունաբերական, առետրական կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ոռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ոռոյալթիները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում են ոռոյալթիները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է: Սակայն եթե ոռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ոռոյալթիներ վճարելու պարտավորությունը, եւ այդպիսի ոռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ոռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Այն դեպքում, երբ վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ոռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր

վճարողի եւ շահույթ ստացող սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքից տարբեր այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ՝ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում նավեր կամ օդանավեր

շահագործող՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից այդպիսի նավերի կամ օդանավերի օտարումից առաջացած արժեքի հավելանքը կամ այդպիսի նավերի կամ օդանավերի շահագործման հետ կապված՝ 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից ստացված արժեքի հավելանքը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որեւէ ընկերության բաժնետոմսերի կամ համադրելի տոկոսների, օրինակ՝ գործընկերային կամ հավատարմագրային ընկերության տոկոսների օտարումից ստացված հավելանքը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, եթե օտարմանը նախորդող 365 օրվա ընթացքում ցանկացած ժամանակ այդ բաժնետոմսերը կամ համադրելի տոկոսները իրենց արժեքի առնվազն 50 տոկոսի չափով ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվում են 6-րդ հոդվածով սահմանված՝ այդ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, եթե այդ բաժնետոմսերը կամ համադրելի տոկոսները չեն վաճառվում 28-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետում նշված ճանաչված ֆոնդային բորսայում, եւ ռեզիդենտը եւ այդ ռեզիդենտի հետ փոխկապակցված անձը չեն տնօրինում այդ բաժնետոմսերի կամ համադրելի տոկոսների դասի ընդհանուր 5 տոկոսը կամ դրանից պակասը:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում նշվածից տարբեր ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է գույքն օտարողը:

ՀՈԴՎԱԾ 14

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՅ ՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ եւ 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ վարձու աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրություններ ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում, եթե այդպիսի աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ կերպ, ապա դրա դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում, եթե՝

ա) ստացողը դիտարկվող հարկային տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, եւ

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պայմանավորվող պետության

ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, եւ

գ) գործատուի՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատությունը չի կրում վարձատրության ծախսերը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, բացառությամբ միայն մյուս Պայմանավորվող պետությունում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվելու դեպքի, միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա կամ օդանավում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց որպես նավի կամ օդանավի կանոնավոր անձնակազմի անդամի՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված վարձատրությունը կարող է հարկվել միայն առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում:

ՀՈԴՎԱԾ 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Տնօրենների հոնորարները եւ այլ համանման վճարումներ, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտն ստանում է որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ համանման այլ մարմնի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

ՀՈԴՎԱԾ 16

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

1. Չնայած 14-րդ հոդվածի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործչի՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստի կամ երաժշտի, կամ որպես մարզիկի իրականացրած՝ իր անձնական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:

2. Այն դեպքում, երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, այդ եկամուտը, չնայած 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված կենսաթոշակները եւ այլ

համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

ՀՈԴՎԱԾ 18

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից այդ Պայմանավորվող պետությանը կամ վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, աշխատանքի դիմաց վարձատրությունը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պայմանավորվող պետությունում, եւ ֆիզիկական անձն այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, որը՝

- i) այդ մյուս Պայմանավորվող պետության քաղաքացի է, կամ
- ii) չի դարձել այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտ՝

բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից կամ նրանց ստեղծած հիմնադրամներից կամ այն հիմնադրամներից, որտեղ վերջիններս ներդրումներ են կատարում, Պայմանավորվող պետությանը կամ նրա վարչատարածքային ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձն այդ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է ու քաղաքացի:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, աշխատանքի դիմաց վարձատրության, կենսաթոշակի եւ համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 19

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչեւ Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, եւ որը գտնվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, ենթակա չէ հարկման այդ Պայմանավորվող պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջացել են այդ Պայմանավորվող պետությունից դուրս գտնվող աղբյուրներից: Փորձնակի դեպքում սույն հոդվածով նախատեսված հարկերից ազատումը կիրառվում է միայն այն ամսաթվից մեկ տարին չգերազանցող ժամկետի ընթացքում, որի դրությամբ նա սկսել է իր վերապատրաստումը այդ Պայմանավորվող պետությունում:

ՀՈԴՎԱԾ 20

ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Անկախ սույն Կոնվենցիայի մյուս դրույթներից՝ ոչ հրապարակային գործընկերության պայմանագրի (Ճապոնիայի դեպքում [Tokumei Kumiai]) կամ համանման այլ պայմանագրի համաձայն կատարված ներդրումների առնչությամբ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված

եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում՝ այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ պայմանով, որ այդ եկամուտն առաջանում է այդ մյուս Պայմանավորվող պետությունում եւ ենթակա է նվազեցման այդ մյուս Պայմանավորվող պետությունում վճարողի կողմից հարկման ենթակա եկամուտը հաշվարկելիս:

ՀՈԴՎԱԾ 21

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Այն եկամտի տեսակները, որոնց փաստացի սեփականատերը Պայմանավորվող պետության ռեզիդենտն է, որոնք նշված չեն սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամտի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում է եկամուտը, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

3. Այն դեպքում, երբ վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ կամ

նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով 1-ին կետում նշված եկամտի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ փաստացի սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում եկամտի ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա՝ յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

ՀՈԴՎԱԾ 22

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

1. Հայաստանի դեպքում կրկնակի հարկումը վերացվում է հետեւյալ կերպ.

ա) եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Ճապոնիայում, ապա Հայաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հայկական հարկից նվազեցնել Ճապոնիայում վճարված ճապոնական հարկին հավասար գումար: Սակայն այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված հայկական հարկի այն մասը, որը վերագրվում է այն եկամտին, որը կարող է հարկվել Ճապոնիայում:

բ) եթե սույն Կոնվենցիայի որեւէ դրույթի համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտն ազատվում է հարկերից Հայաստանում, ապա Հայաստանն այդ ռեզիդենտի մնացած եկամտի մասով հարկի գումարը հաշվարկելիս, այնուհանդերձ, կարող է հաշվի առնել հարկերից ազատված եկամուտը:

2. Ճապոնիայի դեպքում կրկնակի հարկումը բացառվում է հետեւյալ կերպ.

Ճապոնիայից բացի ցանկացած այլ երկրում վճարման ենթակա հարկի՝ ճապոնական հարկի զեղչի թույլտվության վերաբերյալ Ճապոնիայի օրենքների դրույթների համաձայն՝ այն դեպքում, երբ Ճապոնիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում Հայաստանում, որը կարող է հարկվել Հայաստանում սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, այդ եկամտի մասով վճարման ենթակա հայկական հարկի գումարը հաշվանցվում է այդ ռեզիդենտից գանձվող ճապոնական հարկի դիմաց: Հարկի զեղչի գումարը, այնուամենայնիվ, չի կարող գերազանցել այդ եկամտին համապատասխանող ճապոնական հարկի գումարը:

ՀՈԴՎԱԾ 23

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որեւէ այլ կամ առավել

ծանր հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միեւնոյն հանգամանքներում, մասնավորապէս՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պայմանավորվող պետության քաղաքացիները: Սույն կետի դրույթները, չհակասելով 1-ին հոդվածի դրույթներին, նաեւ կիրառվում են այն անձանց նկատմամբ, որոնք Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չեն:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիություն չունեցող անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որեւէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց միեւնոյն հանգամանքներում, մասնավորապէս՝ կապված ռեզիդենտության հետ, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պայմանավորվող պետության քաղաքացիները:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումն այդ մյուս պետությունում չպետք է պակաս բարենպաստ լինի այդ մյուս Պայմանավորվող պետության՝ միեւնոյն գործունեությունն իրականացնող ձեռնարկության հարկումից: Սույն կետի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպէս Պայմանավորվող պետության համար պարտավորություն՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման

վրա հարկման նպատակներով տրամադրելու այնպիսի անձնական արտոնություններ, առավելություններ եւ նվազեցումներ, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին, 11-րդ հոդվածի 7-րդ, 12-րդ հոդվածի 6-րդ կամ 21-րդ հոդվածի 3-րդ կետերի դրույթները՝ տոկոսները, ռոյալթիները եւ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին կատարվող մյուս վճարումներն այդ ձեռնարկության հարկվող շահույթը որոշելու նպատակով ենթակա են նվազեցման այն նույն պայմաններով, որոնցով դրանք կվճարվեին առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ենթարկվեն որեւէ այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որեւէ պահանջի, քան այն հարկումն ու դրա հետ կապված պահանջներն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության այլ նմանատիպ ձեռնարկություններ:

6. Սույն հոդվածի դրույթները, անկախ 2-րդ հոդվածի դրույթներից,

կիրառվում են ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերի նկատմամբ, որոնք սահմանվել են Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից:

ՀՈՂՎԱԾ 24.

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, նա այդ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենքներով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից անկախ կարող է իր գործը ներկայացնել ցանկացած Պայմանավորվող պետության իրավասու մարմին: Գործը պետք է ներկայացվի Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցումից հետո՝ երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը բողոքը համարում է հիմնավոր, եւ եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա վերջինս ձգտում է գործը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կատարվի՝ անկախ Պայմանավորվող

պետությունների ներպետական օրենքներում առկա որեւէ ժամկետային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են կարգավորել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են խորհրդակցել նաեւ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում՝ կրկնակի հարկումը վերացնելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ, այդ թվում՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից կազմված համատեղ հանձնաժողովի միջոցով՝ այս հոդվածի նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

5. Այն դեպքում, երբ՝

ա) 1-ին կետի համաձայն՝ անձը Պայմանավորվող պետության իրավասու մարմին է ներկայացրել գործ այն հիմքով, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցրել են այդ անձի համար սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, եւ

բ) այդ գործը կարգավորելու համար իրավասու մարմինների կողմից պահանջված ամբողջ տեղեկատվությունը երկու իրավասու մարմիններին ներկայացվելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, իրավասու մարմինները չեն

կարողանում համաձայնության գալ 2-րդ կետով սահմանված կարգով այդ գործը լուծելու համար,

այդ գործից բխող ցանկացած չլուծված խնդիր պետք է ներկայացվի արբիտրաժ, եթե անձը դա գրավոր պահանջի: Այնուամենայնիվ, այդ չլուծված խնդիրները չեն կարող ներկայացվել արբիտրաժ, եթե Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի դատարանի կամ վարչական դատարան կողմից այդ խնդիրների վերաբերյալ արդեն իսկ կայացվել է որոշում: Բացառությամբ այն դեպքերի, երբ գործին ուղղակիորեն առնչություն ունեցող անձը չի ընդունում արբիտրաժային որոշումը կատարելու փոխադարձ համաձայնությունը, այդ որոշումը պարտադիր է երկու Պայմանավորվող պետությունների համար եւ պետք է իրականացվի՝ անկախ այդ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենքներով սահմանված ժամկետային սահմանափակումից: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ կարգավորել սույն կետի կիրառման կարգը:

ՀՈԴՎԱԾ 25

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են տեղեկություններ, որոնք պատշաճ կհամարվեն Պայմանավորվող պետությունների կամ նրանց վարչատարածքային

ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերի առնչությամբ սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ ներպետական օրենքների կիրառման կամ կատարման համար այնքանով, որքանով դրանց հիման վրա հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին եւ 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին կետի համաձայն ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պայմանավորվող պետության ներպետական օրենքներին համապատասխան ստացված տեղեկությունը, եւ կարող է բացահայտվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ՝ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ հավաքագրմանը, բռնագանձմանը կամ հետապնդմանը, բողոքների քննմանը կամ վերոնշյալի վերահսկմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդ նպատակներով: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում: Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության ստացած տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով, եթե այլ նպատակներով այդպիսի տեղեկության օգտագործումը թույլատրվում է երկու Պայմանավորվող պետությունների օրենքներով, եւ տեղեկությունը տրամադրող Պայմանավորվող պետության իրավասու մարմինը թույլատրում է նման օգտագործումը:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ Պայմանավորվող պետության համար առաջացնեն՝

ա) տվյալ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին եւ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցներ իրականացնելու պարտավորություն,

բ) այնպիսի տեղեկություններ տրամադրելու պարտավորություն, որոնք հասանելի չեն տվյալ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքների համաձայն կամ վարչարարության բնականոն գործընթացում,

գ) այնպիսի տեղեկություններ տրամադրելու պարտավորություն, որոնք բացահայտում են որեւէ առետրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առետրային գործընթաց, կամ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետությունը տեղեկություններ է պահանջում սույն հոդվածի համաձայն, ապա մյուս Պայմանավորվող պետությունը պետք է օգտագործի տեղեկություններ ձեռք բերելու իր միջոցները՝ պահանջված տեղեկություններն ստանալու համար նույնիսկ այն դեպքում, երբ այդ մյուս Պայմանավորվող պետությունն իր հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկությունների անհրաժեշտություն: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետով նախատեսված սահմանափակումների, սակայն այդպիսի սահմանափակումները ոչ մի

դեպքում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ Պայմանավորվող պետությանը թույլատրվի մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ այդ տեղեկություններն իր համար ներպետական շահ չեն ներկայացնում:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ Պայմանավորվող պետությանը թույլատրվի մերժել տեղեկությունների տրամադրումը միայն այն պատճառով, որ տեղեկություններին տիրապետում են բանկը, այլ ֆինանսական հաստատություն, նշանակված անձը կամ գործակալությունում աշխատող անձը կամ խնամակալը, կամ որ դրանք վերաբերում են անձի սեփական շահերին:

ՀՈՂՎԱԾ 26

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունները կաջակցեն միմյանց եկամուտների հավաքագրման հայցերի գործում: Այս աջակցությունը չի սահմանափակվում 1-ին եւ 2-րդ հոդվածներով: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են փոխադարձ համաձայնությամբ կարգավորել սույն հոդվածի կիրառման կարգը:

2. Սույն հոդվածում օգտագործվող «եկամուտների հավաքագրման հայց» եզրույթը նշանակում է հետեւյալ հարկերի գծով առաջացած պարտավորության գումար այնքանով, որքանով հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային կամ ցանկացած այլ փաստաթղթի, որի կողմերն են

Պայմանավորվող պետությունները, ինչպես նաև այդ գումարին առնչվող տոկոսները, վարչական տուգանքները եւ դրանց հավաքման կամ պահպանման ծախսերը.

ա) Հայաստանում՝

i) 2-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետում նշված հարկերը, եւ

ii) ավելացված արժեքի հարկը,

բ) Ճապոնիայում՝

i) 2-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի (i)-(iv) պարբերություններում նշված հարկերը,

ii) հատուկ կորպորատիվ հարկը վերակառուցման համար,

iii) սպառողական հարկը,

iv) տեղական սպառողական հարկը,

v) ժառանգության հարկը, եւ

vi) նվիրատվության հարկը,

գ) ցանկացած այլ հարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ համաձայնեցվել Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջեւ դիվանագիտական հայտագրերի փոխանակման միջոցով, եւ

դ) ցանկացած նմանատիպ կամ էապես համանման հարկեր, որոնք սահմանվում են Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո՝ ի լրումն «ա», «բ»

կամ «գ» ենթակետերում նշված հարկերի կամ դրանց փոխարեն:

3. Եթե Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայցը պետք է ապահովվի այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն եւ վերաբերում է այն անձին, որն այդ պահի դրությամբ այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն չի կարող կանխել դրա հավաքումը, ապա այդ Պայմանավորվող պետության իրավասու մարմնի դիմում-պահանջով այդ եկամուտների հավաքագրման հայցը կընդունվի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից հավաքման նպատակով: Այդ եկամուտների հավաքագրման հայցը ենթակա է հավաքման այդ մյուս Պայմանավորվող պետության կողմից նրա՝ սեփական հարկերի հարկադիր գանձման եւ հավաքման նկատմամբ կիրառվող օրենսդրության դրույթներին համապատասխան այնպես, իբրև այդ եկամուտների հավաքագրման հայցը այդ մյուս Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայցն է, որը կատարել է այն պայմանները, որոնք թույլ են տալիս այդ մյուս Պայմանավորվող պետությանը սույն կետի համաձայն դիմում-պահանջ ներկայացնել:

4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայցը ենթադրում է այնպիսի պահանջ, որի նկատմամբ այդ Պայմանավորվող պետությունը, իր օրենսդրության համաձայն, գանձումն ապահովելու համար կարող է ձեռնարկել պահպանման միջոցներ, ապա այդ եկամուտների հավաքագրման հայցն այդ Պայմանավորվող պետության իրավասու մարմնի դիմում-պահանջով ընդունվում է մյուս Պայմանավորվող

պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով: Այդ մյուս Պայմանավորվող պետությունը, իր օրենսդրության դրույթներին համապատասխան, պահպանման միջոցներ է ձեռնարկում այդ եկամուտների հավաքագրման հայցի առնչությամբ այնպես, իբրև այդ եկամուտների հավաքագրման հայցն այդ մյուս Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայցն է, եթե նույնիսկ այդ միջոցների ձեռնարկման պահին եկամուտների հավաքագրման հայցը ենթակա չէ հարկադիր գանձման առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում կամ վերաբերում է այն անձին, որն իրավունք ունի կանխելու դրա հավաքումը:

5. Անկախ 3-րդ եւ 4-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն ընդունված եկամուտների հավաքագրման հայցն այդ Պայմանավորվող պետությունում ենթակա չէ այնպիսի ժամանակային սահմանափակումների, կամ դրան չի տրվում այնպիսի գերակայություն, որոնք, այդ Պայմանավորվող պետության օրենքի համաձայն, կիրառվում են եկամուտների հավաքագրման հայցի նկատմամբ՝ դրա բնույթից ելնելով: Ի հավելումն դրա՝ 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից ընդունված եկամուտների հավաքագրման հայցը չի կարող այդ Պետությունում ունենալ որեւէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամուտների հավաքագրման հայցի նկատմամբ՝ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն:

6. 3-րդ եւ 4-րդ կետերի իրականացման նպատակներով

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից ընդունված եկամուտների հավաքագրման հայցի գործում այդ Պայմանավորվող պետության կողմից իրականացված գործողությունները, որոնք եթե իրականացվեին մյուս Պայմանավորվող պետության կողմից, ապա այդ Պայմանավորվող պետության օրենքների համաձայն եկամուտների հավաքագրման հայցի նկատմամբ կիրառվող ժամկետների վրա կունենային կասեցնող կամ ընդհատող ազդեցություն, այդ մյուս Պայմանավորվող պետության օրենքների համաձայն ունեն այդպիսի ազդեցություն: Առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության իրավասու մարմինը մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին տեղեկացնում է եկամուտների հավաքագրման հայցի համար առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության կողմից իրականացված գործողությունների մասին:

7. Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայցի գոյության, օրինականության կամ չափի վերաբերյալ վարույթները չեն ներկայացվում մյուս Պայմանավորվող պետության դատարաններ կամ վարչական մարմիններ:

8. Եթե Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից 3-րդ կամ 4-րդ կետերին համապատասխան դիմում-պահանջը ուղարկվելուց հետո եւ նախքան մյուս Պայմանավորվող պետության կողմից համապատասխան եկամուտների հավաքագրման հայցի գանձումն ու առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությանը փոխանցումը՝ համապատասխան եկամուտների հավաքագրման հայցը՝

ա) 3-րդ կետին համապատասխանող դիմում-պահանջի դեպքում դադարում է համարվել առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայց, որը ենթակա է հարկադիր գանձման այդ Պայմանավորվող պետության օրենսդրությամբ եւ պատկանում է այն անձին, որն այդ պահին չի կարող, այդ Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, կանխել դրա հավաքումը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխանող դիմում-պահանջի դեպքում դադարում է համարվել առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության եկամուտների հավաքագրման հայց, որի նկատմամբ այդ Պայմանավորվող պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, ընդունել պահպանման միջոցներ՝ դրա գանձումն ապահովելու նպատակով,

ապա առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության իրավասու մարմինն անմիջապես պետք է ծանուցի մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինն այդ փաստի մասին, եւ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի ընտրությամբ առաջինը հիշատակված Պայմանավորվող պետության իրավասու մարմինը կարող է կասեցնել կամ հետ վերցնել իր դիմում-պահանջը:

9. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում այնպես, որ Պայմանավորվող պետության համար առաջացնեն՝

ա) իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին եւ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցներ իրականացնելու պարտավորություն,

բ) այնպիսի միջոցներ իրականացնելու պարտավորություն, որոնք կհակասեն պետական քաղաքականությանը (հասարակական կարգին [ordre public]),

գ) աջակցություն տրամադրելու պարտավորություն այն դեպքում, եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի իրականացրել համապատասխանաբար հավաքման կամ պահպանման հետ կապված բոլոր ողջամիտ միջոցները, որոնք հասանելի են իր օրենքներով կամ վարչական պրակտիկայով,

դ) աջակցություն ցուցաբերելու պարտավորություն այն դեպքերում, երբ այդ Պայմանավորվող պետության վարչական բեռն ակնհայտորեն անհամաչափ է մյուս Պայմանավորվող պետության կողմից ստացված օգուտին:

ՀՈԴՎԱԾ 27

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ ազդեցություն չի ունենում դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆինանսական արտոնությունների վրա:

ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով, Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը չունի այն արտոնության իրավունքը, որն այլ պարագայում կշնորհվեր իրեն 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն, եթե այդ ընկերությունը արտոնություն շնորհելու պահին որակավորված անձ չէ, ինչպես սահմանված է 2-րդ կետում:

2. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը որակավորված անձ է այն ժամանակ, երբ 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան այլապես արտոնություն է տրվում այն դեպքում, երբ՝

ա) այդ պահին դրա բաժնեմասերի գլխավոր դասը կանոնավոր կերպով վաճառվում է մեկ կամ ավելի ճանաչված ֆոնդային բորսայում, կամ

բ) այդ պահին և այդ պահը ներառող տասներկուամսյա ժամանակահատվածի օրերի առնվազն կեսին ստորև նշված սուբյեկտները, որոնք այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտներ են, ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում են ընկերության բաժնեմասերի առնվազն 50 տոկոսին,

i) անհատը,

ii) Պայմանավորվող պետությունը, վերջինիս վարչատարածքային

ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը, այդ Պայմանավորվող պետության կենտրոնական բանկը կամ այդ Պայմանավորվող պետության, դրա վարչատարածքային ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմնի գործակալությունը կամ կառույցը, կամ

iii) ընկերությունը, որը «ա» ենթակետով սահմանված որակավորված անձ է:

3. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարվող ընկերությունը որակավորված անձ չէ, ապա այն Պայմանավորվող պետության իրավասու մարմինը, որտեղ սույն հոդվածի նախորդ կետերի համաձայն նրան մերժվել է արտոնության շնորհումը, այնուամենայնիվ, կարող է շնորհել այն արտոնությունը, որն այլապես կշնորհվեր 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի առարկան եւ նպատակները, սակայն միայն այն դեպքում, երբ նման ընկերությունը այդպիսի իրավասու մարմին է ներկայացնում ապացույցներ, որ իր ստեղծման, ձեռքբերման կամ պահպանման եւ իր գործառնությունների իրականացման գլխավոր նպատակներից եւ ոչ մեկը չի ենթադրել արտոնություններ ստանալը: Պայմանավորվող պետության իրավասու մարմինը, որին սույն կետում նշված դիմում-պահանջը ներկայացվել է այլ Պայմանավորվող պետության ռեզիդենտ համարվող ընկերության կողմից, մինչեւ դիմում-պահանջը բավարարելը կամ մերժելը խորհրդակցում է այդ մյուս

Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ:

4. Սույն հոդվածի նպատակներով՝

ա) «բաժնեմասերի գլխավոր դաս» եզրույթը նշանակում է ընկերության բաժնեմասերի այն դասը կամ դասերը, որոնք ներկայացնում են ընկերության ընդհանուր ձայների մեծամասնությունը եւ արժեքը,

բ) «ճանաչված ֆոնդային բորսա» եզրույթը նշանակում է՝

i) ցանկացած ֆոնդային բորսա, որը որպես այդպիսին ստեղծվել եւ կարգավորվում է Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի օրենքներով, եւ

ii) Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված ցանկացած այլ ֆոնդային բորսա:

5. ա) Եթե

i) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից եւ առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունն այդպիսի եկամուտը դիտարկում է որպես երրորդ սուբյեկտի տարածքում գտնվող ձեռնարկության մշտական հաստատությանը վերագրելի եկամուտ, եւ

ii) այդ մշտական հաստատությանը վերագրելի շահույթը ազատվում է հարկումից առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում,

ապա սույն Կոնվենցիայով նախատեսված արտոնությունները չեն կիրառվում եկամտի այն տեսակի նկատմամբ, որի համար գանձվող հարկը երրորդ սուբյեկտի տարածքում պակաս է այն հարկի 60 տոկոսից, որը կարող էր սահմանվել առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում եկամտի այդ տեսակի նկատմամբ, եթե մշտական հաստատությունը գտնվեր առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում: Այդ դեպքում ցանկացած եկամուտ, որի նկատմամբ կիրառվում են սույն կետի դրույթները, մնում է հարկման ենթակա մյուս Պայմանավորվող պետության ներպետական օրենքներին համապատասխան՝ անկախ Կոնվենցիայի այլ դրույթներից:

բ) «ա» ենթակետի դրույթները չեն կիրառվի, եթե այդ ենթակետում նկարագրված՝ մյուս Պայմանավորվող պետությունից ստացված եկամուտը առաջանում է կամ կապված է մշտական հաստատության միջոցով իրականացվող ակտիվ ձեռնարկատիրական գործունեության հետ (որը տարբերվում է ձեռնարկության սեփական միջոցների հաշվին ներդրումներ կատարելուց, դրանք կառավարելուց կամ պարզապես ներդրումներ ունենալուց, եթե այդ գործունեությունը բանկային, ապահովագրական կամ արժեթղթերի հետ կապված գործունեություն չէ, որն իրականացվում է համապատասխանաբար բանկի, ապահովագրական ընկերության կամ արժեթղթերի գրանցված դիլերի կողմից):

գ) Եթե «ա» ենթակետի դրույթների համաձայն Կոնվենցիայով սահմանված արտոնությունների տրամադրումը Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված եկամտի որեւէ տեսակի հետ կապված մերժվում

է, ապա մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինը, այնուամենայնիվ, կարող է շնորհել եկամտի այդ տեսակի հետ կապված այդ արտոնությունները, եթե այդ ռեզիդենտի դիմում-պահանջին ի պատասխան այդ իրավասու մարմինը որոշում է, որ այդ արտոնությունների շնորհումը արդարացված է այն հիմքերով, որոնց առկայության պարագայում այդ ռեզիդենտը չի բավարարել «ա» եւ «բ» ենթակետերի պահանջները (օրինակ՝ կորուստների առկայությունը): Պայմանավորվող պետության իրավասու մարմինը, որին ներկայացվել է նախորդ նախադասությամբ սահմանված դիմում-պահանջն այդ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից, մինչեւ դիմում-պահանջը բավարարելը կամ մերժելը խորհրդակցում է այդ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ:

6. Չնայած սույն Կոնվենցիայի մյուս դրույթներին՝ սույն Կոնվենցիայով նախատեսված արտոնությունը չի շնորհվում եկամտի որեւէ տեսակի նկատմամբ, եթե, հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները, հիմքեր կան եզրակացնելու, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն էր, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհելը կհամապատասխաներ սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների առարկային եւ նպատակներին:

ՀՈԴՎԱԾ 29

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան հաստատվում է յուրաքանչյուր Պայմանավորվող պետության իրավական ընթացակարգերին համապատասխան եւ ուժի մեջ է մտնում այդ հաստատման մասին նշում պարունակող դիվանագիտական հայտագրերի փոխանակման օրվանից հետո երեսուներորդ օրը:

2. Սույն Կոնվենցիան գործում է՝

ա) հարկային տարվա հիման վրա գանձվող հարկերի առնչությամբ՝ այն հարկերի նկատմամբ, որոնց հարկային տարին սկսվում է Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ դրանից հետո,

բ) հարկային տարվա հիման վրա չգանձվող հարկերի առնչությամբ՝ այն հարկերի նկատմամբ, որոնց հարկային տարին սկսվում է Կոնվենցիան ուժի մեջ մտնելուն հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ դրանից հետո:

3. ա) Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ 24-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները գործում են՝

ի) 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված գործերի առնչությամբ՝ Պայմանավորվող պետությունների կառավարությունների կողմից դիվանագիտական հայտագրերի փոխանակման միջոցով

համաձայնեցման ենթակա օրը կամ դրանից հետո,

ii) 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված գործերի առնչությամբ՝ նախքան այդ օրը. այս դեպքում, նման գործի վերաբերյալ ոչ մի չլուծված հարց չի կարող փոխանցվել արբիտրաժին մինչև այդ օրվանից սկսած երկու տարին լրանալը:

բ) Պայմանավորվող պետությունների կառավարությունները համաձայնության են գալիս «ա» ենթակետի (i) պարբերության մեջ նշված ամսաթվի շուրջ, երբ Հայաստանը սահմանում է իր ներքին հիմքերը եւ ընթացակարգերը՝ 24-րդ հոդվածի 5-րդ կետի իրականացման համար, կամ երբ Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո Հայաստանը եկամուտների հետ կապված կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր է կնքում, որը պարունակում է արբիտրաժային դրույթներ, որոնք կիրառելի են երրորդ սուբյեկտի եւ Հայաստանի միջեւ բացառապես այն անձի դիմում-պահանջով, որն այդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխանող համաձայնագրի դրույթների համաձայն ներկայացնում է գործը: Հայաստանի իրավասու մարմիններն այդ իրադարձության մասին տեղեկացնում են Ճապոնիայի իրավասու մարմիններին այն տեղի ունենալուց անմիջապես հետո:

4. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ 25-րդ եւ 26-րդ հոդվածների դրույթները գործում են սույն Կոնվենցիան ուժի մտնելու ամսաթվից՝ անկախ հարկերի գանձման ամսաթվից կամ այն հարկային տարվանից, որին վերաբերում են հարկերը:

5. Ճապոնիայի կառավարության եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջեւ կնքված՝ «Եկամուտների կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ» կոնվենցիան եւ դրա արձանագրությունը, որոնք ստորագրվել են Տոկիոյում 1986 թվականի հունվարի 18-ին (այսուհետ՝ նախորդ կոնվենցիա), դադարում են գործել Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ այն օրվանից, երբ սույն Կոնվենցիան կիրառելի է դառնում այն հարկերի մասով, որոնց վրա տարածվում է սույն Կոնվենցիայի գործողությունը 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթներին համապատասխան:

6. Անկախ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց՝ Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի ռեզիդենտ հանդիսացող եւ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին նախորդ կոնվենցիայի 17-րդ հոդվածով նախատեսված արտոնությունների իրավունք ունեցող ֆիզիկական անձը շարունակում է օգտվել այդ արտոնություններից մինչեւ այն պահը, երբ ֆիզիկական անձի արտոնությունների իրավունքի գործողությունը կդադարեր նախորդ կոնվենցիան ուժի մեջ մնալու պայմաններում:

7. Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ նախորդ կոնվենցիան դադարում է դրա կիրառության վերջին օրը՝ սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին համապատասխան:

ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան մնում է ուժի մեջ մինչև Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի ժամկետը լրանալուց հետո ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող պետությանը դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով: Այդ դեպքում սույն Կոնվենցիայի գործողությունը դադարում է՝

ա) հարկային տարվա հիման վրա գանձվող հարկերի առնչությամբ՝ այն հարկերի նկատմամբ, որոնց հարկային տարին սկսվում է ծանուցում ներկայացնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ դրանից հետո,

բ) հարկային տարվա հիման վրա չգանձվող հարկերի առնչությամբ՝ այն հարկերի նկատմամբ, որոնք ենթակա են գանձման ծանուցում ներկայացնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ դրանից հետո:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ է Երևան քաղաքում 2024 թվականի դեկտեմբերի 26-ին,
երկու բնօրինակից՝ հայերեն, ճապոներեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր
տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված
տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն
տեքստը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝



Ճապոնիայի կողմից՝



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության եւ Ճապոնիայի միջեւ «Եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրելիս Հայաստանի Հանրապետությունը եւ Ճապոնիան համաձայնության են եկել հետեւյալ դրույթների շուրջ, որոնք կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը:

1. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի առնչությամբ.

Ենթադրվում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված ձեռնարկատիրական գործունեության վայրերից յուրաքանչյուրը այդ հոդվածի 1-ին կետով սահմանված մշտական հաստատությունն է միայն այն դեպքում, երբ այն բավարարում է այդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

2. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ.

Եթե Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո Հայաստանը երրորդ սուբյեկտի հետ կնքում է համաձայնագիր, որը պարունակում է դրույթներ, համաձայն որոնց Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետում նկարագրված եկամտի տեսակի նկատմամբ հարկումը Հայաստանում սահմանափակվում է այդ կետով նախատեսված հարկի դրույքաչափից նվազ դրույքաչափով, կամ համաձայն որոնց եկամտի այդ տեսակը Հայաստանում ազատվում է հարկումից, Պայմանավորվող պետությունները Ճապոնիայի պահանջով բանակցություններ են վարում հարկի այդ նվազ դրույքաչափի կամ հարկումից

ազատելու մասին դրույթները Կոնվենցիայում ներառելու նպատակով:
Հայաստանի իրավասու մարմինները այդ իրադարձության մասին
տեղեկացնում են Ճապոնիայի իրավասու մարմիններին այն տեղի ունենալուց
անմիջապես հետո:

3. Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ կետի առնչությամբ.

ա) i) Եթե Պայմանավորվող պետության իրավասու մարմինը
կասեցրել է որեւէ գործի առնչությամբ Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին եւ 2-
րդ կետերի համաձայն փոխադարձ համաձայնությամբ գործը լուծելու
ընթացակարգը (այսուհետ՝ սույն կետում՝ փոխադարձ համաձայնության
ընթացակարգ), քանի որ այդ գործը մեկ կամ մի քանի նմանատիպ խնդիրների
մասով քննվում է դատարանում կամ վարչական դատարանում ապա այդ
հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետը կդադարեցվի,
քանի դեռ գործի քննությունը դատարանում կամ վարչական դատարանում չի
կասեցվել, կամ հայցից չեն հրաժարվել:

ii) Եթե գործը ներկայացրած անձը եւ Պայմանավորվող պետության
իրավասու մարմինը համաձայնության են եկել փոխադարձ համաձայնության
ընթացակարգը կասեցնելու հարցում, ապա Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ
կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետը կդադարեցվի մինչեւ
կասեցումը չեղյալ հայտարարելը:

iii) Եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները
համաձայնում են, որ գործի անմիջական ազդեցությանը ենթարկված անձը

Ժամանակին չի ներկայացրել Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետի մեկնարկից հետո իրավասու մարմիններից որեւէ մեկի կողմից պահանջված որեւէ լրացուցիչ էական տեղեկատվություն, ապա ժամկետը երկարաձգվում է տեղեկատվությունը պահանջելու օրը սկսվող եւ տեղեկատվությունը տրամադրելու օրն ավարտվող ժամկետին համարժեք ժամկետով:

բ) i) Արբիտրների նշանակումը կարգավորվում է հետեւյալ կանոններով.

աա) Արբիտրաժային խորհուրդը բաղկացած է երեք առանձին արբիտրներից, որոնք միջազգային հարկային հարցերի ոլորտում ունեն գիտելիքներ կամ փորձ:

բբ) Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններից յուրաքանչյուրը նշանակում է մեկ արբիտր: Այդ կերպ նշանակված երկու արբիտրները նշանակում են երրորդ արբիտր, որը հանդես կգա որպես արբիտրաժային խորհրդի նախագահ: Նախագահը Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի քաղաքացի կամ ռեզիդենտ չպետք է լինի:

գգ) Յուրաքանչյուր արբիտր պետք է լինի անաչառ եւ նշանակման պահին՝ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններից, հարկային մարմիններից եւ ֆինանսների նախարարություններից ու գործի անմիջական ազդեցությանը ենթարկված բոլոր անձանցից (ինչպես նաեւ նրանց խորհրդականներից) անկախ, պահպանի իր անաչառությունն ու

անկախությունը արբիտրաժային վարույթի ամբողջ ընթացքում եւ դրանից հետո ողջամիտ ժամանակահատվածում պետք է խուսափի ցուցաբերել այնպիսի վարքագիծ, որը կարող է վնասել արբիտրաժային վարույթի մասով արբիտրների անաչառության եւ անկախության դրսեւորմանը:

ii) Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն ապահովում են, որ արբիտրները եւ նրանց աշխատակիցները մինչեւ արբիտրաժային վարույթին իրենց մասնակցությունը գրավոր համաձայնություն տան, որ արբիտրաժային վարույթի վերաբերյալ ցանկացած տեղեկատվությունը կդիտարկեն Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված գաղտնիության եւ չիրապարակման պարտավորությանը և Պայմանավորվող պետությունների կիրառելի օրենքներին համապատասխան:

iii) Միայն Կոնվենցիայի 24-րդ եւ 25-րդ հոդվածների դրույթների եւ տեղեկատվության փոխանակման, գաղտնիության եւ վարչական աջակցության վերաբերյալ Պայմանավորվող պետությունների ներպետական օրենքների կիրառման նպատակներով արբիտրները եւ յուրաքանչյուր արբիտրի հաշվով առավելագույնը երեք աշխատակից (եւ պոտենցիալ արբիտրները միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է արբիտրների պահանջները կատարելու նրանց կարողությունը ստուգելու համար) համարվում են այն անձինք կամ մարմինները, որոնց կարելի է հաղորդել տեղեկատվությունը: Արբիտրաժային խորհրդի կամ պոտենցիալ արբիտրների կողմից ստացված տեղեկատվությունը եւ այն տեղեկատվությունը, որը Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ստացել են

արբիտրաժային խորհրդից, համարվում են Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն փոխանակված տեղեկատվություն:

գ) i) Արբիտրաժային որոշումը վերջնական է:

ii) Արբիտրաժային որոշումը պարտադիր չէ Պայմանավորվող պետությունների համար, եթե Պայմանավորվող պետություններից մեկի դատարանների վերջնական որոշման համաձայն արբիտրաժային որոշումն անվավեր է: Այս դեպքում Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արբիտրաժի վերաբերյալ դիմում-պահանջը համարվում է ներկայացված, եւ արբիտրաժային վարույթը համարվում է չկայացած (բացառությամբ, երբ դա բխում է «բ» ենթակետի (ii) եւ (iii) պարբերությունների եւ «գ» ենթակետի նպատակներից): Այս դեպքում կարելի է ներկայացնել արբիտրաժի վերաբերյալ նոր դիմում-պահանջ, եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները չեն գալիս այն համաձայնության, որ չպետք է թույլատրվի ներկայացնել նոր դիմում-պահանջ:

iii) Արբիտրաժային որոշումը չունի նախադեպային նշանակություն:

դ) i) Եթե գործի անմիջական ազդեցությանը ենթարկված անձը չի ընդունում արբիտրաժային որոշման կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությունը, ապա գործն ընդունելի չէ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների կողմից հետագա քննարկման համար:

ii) Գործի վերաբերյալ արբիտրաժային որոշման կատարումն

ապահովող փոխադարձ համաձայնությունը համարվում է գործի անմիջական ազդեցությանը ենթարկված անձի կողմից չընդունված, եթե գործի անմիջական ազդեցությանը ենթարկված ցանկացած անձ փոխադարձ համաձայնության մասին ծանուցումն անձին ուղարկելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում արբիտրաժային որոշման կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությամբ լուծում ստացած բոլոր հարցերի՝ որեւէ դատարանում կամ վարչական մարմնում քննությունից չի հրաժարվում կամ որեւէ այլ կերպ չի դադարեցնում այդ հարցերի մասով ցանկացած ընթացիկ դատական կամ վարչական վարույթ՝ այդ փոխադարձ համաձայնությանը համապատասխանող կարգով:

ե) Կոնվենցիայի 24-րդ հոդվածի եւ սույն կետի նպատակներով արբիտրաժային վարույթը, ինչպես նաեւ (i) եւ (ii) պարբերությունների դեպքում՝ փոխադարձ համաձայնության ընթացակարգը գործի առնչությամբ դադարեցվում են, եթե արբիտրաժի վերաբերյալ դիմում-պահանջ ներկայացնելուց հետո և նախքան արբիտրաժային խորհրդի կողմից որոշումը Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների համար հրապարակելը ցանկացած ժամանակ՝

i) Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ձեռք են բերում Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն գործը լուծելու փոխադարձ համաձայնություն,

(ii) գործը ներկայացրած անձը հրաժարվում է արբիտրաժի վերաբերյալ դիմում-պահանջից կամ փոխադարձ համաձայնության ընթացակարգի

վերաբերյալ դիմում-պահանջից, կամ

iii) գործից բխող չլուծված խնդիրների վերաբերյալ որոշումը կայացվում է Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի դատարանի կամ վարչական դատարան կողմից:


գ) Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններից յուրաքանչյուրը կրում է սեփական եւ իր կողմից նշանակված արբիտրների ծախսերը: Եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների կողմից այլ համաձայնություն ձեռք չի բերվել, արբիտրաժային խորհրդի նախագահի ծախսերը եւ արբիտրաժային վարույթն իրականացնելու հետ կապված մյուս ծախսերը հավասար չափով կրում են Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները:

է) Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ կետի եւ սույն կետի դրույթները չեն կիրառվում այն գործերի նկատմամբ, որոնց վրա տարածվում են Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով
լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից,
ստորագրեցին սույն Արձանագրությունը:

ԿԱՏԱՐՎԱԾ է Երևան քաղաքում 2024 թվականի դեկտեմբերի 26-ին,
երկու բնօրինակից՝ հայերեն, ճապոներեն եւ անգլերեն , ընդ որում, բոլոր
տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված
տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն
տեքստը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝



Ճապոնիայի կողմից՝

